

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2017 թ. մարտի 30-ի թիվ 6 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Ա. Հ. Սիմոնյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) մեթոդական խորհրդի իրավասությունը, ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգը:

2. ԵՊՀ մեթոդական խորհուրդը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որի գործունեությունն ուղղված է ԵՊՀ-ում տարվող ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների պատշաճ իրականացմանը:

3. Մեթոդական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ԵՊՀ կանոնադրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և սույն կանոնակարգին համապատասխան:

2. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Մեթոդական խորհրդի խնդիրներն են՝

1) ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի կրթական խնդիրների իրականացման մշտադիտարկումը,

2) ֆակուլտետային մեթոդական խորհուրդների աշխատանքների մշտադիտարկում,

3) ուսումնական գործընթացի կազմակերպումը կանոնակարգող ներհամալսարանական իրավական ակտերի մշակումն ու վերանայումը,

4) կրթական ծրագրերի ուսումնական պլանների քննարկումը,

5) բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության պլանավորումը,

6) դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների մշտադիտարկումը,

7) ԵՊՀ ներքին իրավական ակտերով սահմանված և ԵՊՀ հիմնական գործունեության հետ կապված այլ խնդիրների իրականացումը:

3. ՄԵԹՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

5. Մեթոդական խորհրդի կազմում ընդգրկված են ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ով ի պաշտոնե խորհրդի նախագահն է, գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորը, ուսումնամեթոդական վարչության պետը, որակի ապահովման կենտրոնի տնօրենը և ներկայացուցիչներ տարբեր մասնագիտական ոլորտներից: Մեթոդական խորհրդի անվանական կազմը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի ներկայացմամբ հաստատում է ռեկտորը՝ երեք տարի ժամկետով:

6. ԵՊՀ մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան՝ ԵՊՀ ռեկտորի առաջարկով, ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ կամ սեփական նախաձեռնությամբ:

7. Մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է իր նիստերում, որոնք անցկացվում են աշխատանքային ծրագրին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

8. Մեթոդական խորհրդի նիստերն իրավազոր են խորհրդի անդամների երկու երրորդի ներկայության դեպքում: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

9. Մեթոդական խորհուրդն առաջարկություններ և եզրակացություններ է ներկայացնում ռեկտորին կամ ԵՊՀ գիտական խորհրդին:

10. Մեթոդական խորհրդի կողմից կազմված փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:

4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Մեթոդական խորհրդի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

12. Սույն կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: